

ԱՄԱԼՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ*

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
amalyabarseghyan42@gmail.com
DOI: 10.54503/1829-4073-2023.1.184-193

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ Հ. ԷՂՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր¹ շարահյուսական կապակցություններ, համաձայնություն, խնդրառություն, առդրություն, ենթական, ստորոգյալ, որոշիչ:

Ներածություն

Ի տարբերություն արձակ ստեղծագործության՝ բանաստեղծական խոսքում առդրություն շարահյուսական կապակցության եղանակն ունի առանձնահատուկ դրսևորում (հատկացուցիչը հատկացյալից, որոշիչը որոշյալից շատ դեպքերում հետադաս է դրվում): Դա պայմանավորված է բանաստեղծական խոսքի յուրահատկությամբ:

Համաձայնության (տվյալ դեպքում ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում) և խնդրառության շարահյուսական կապակցության եղանակների դրսևորումները Հ. Էղոյանի պոեզիայում համապատասխանում են գրական հայերենի օրինաչափություններին:

Շարահյուսագիտության մեջ տարբերակում են կապակցության տեսակ, կապակցության բնույթ, կապակցության եղանակ և կապակցության միջոցներ: Այժմ քննենք և ներկայացնենք կապակցության եղանակները (համաձայնություն, խնդրառություն, առդրություն) Հ. Էղոյանի բանաստեղծություններում:

ա) **Համաձայնություն**: Արդի հայերենի շարահյուսության մեջ ընդունված է, որ համաձայնության եղանակով կապակցվում են ենթական ու ստորոգյալը և բացահայտիչն ու բացահայտյալը: Ենթական և ստորոգյալը, ավելի ճիշտ՝ դրանց կապակցությունը կազմում է նախադասության կառուցվածքային հիմքը: Ինչ վերաբերում է միակազմ նախադասությանը, ապա այն, նախ, անհա-

* Հոդվածը ներկայացվել է 16.12.22, գրախոսվել է 07.04.23, ընդունվել է տպագրության 28.04.23:

Շարահյուսական կապակցության եղանակները Հ. Էդոյանի պոեզիայում

մեմատ փոքր կշիռ ունի շարահյուսական կառուցվածքի համակարգում և, երկրորդ, կարելի է ասել, որ նրա ընկալումը զգալի չափով կատարվում է երկկազմի հիմքի վրա, նրա հետ զուգորդմամբ:

Պատահական չէ, որ նախադասության քերականական կարգերը հիմնականում հանդես են գալիս ենթակայի և ստորոգյալի կապակցության մեջ: Այդ կարգերից է համաձայնությունը, որը, ինչպես հայտնի է, կատարվում է դեմքով ու թվով: Համաձայնությունը՝ որպես քերականական կարգ, այնքան կարևոր է, որ բնականաբար, շարահյուսության ամեն մի դասագրքում էլ քննվել ու քննվում է: Նկատի ունենալով, որ ենթակայի և ստորոգյալի դիմադին համաձայնությունը հանգամանորեն քննված է, և նրանում չկան տարակարծությունների տեղիք տվող երևույթներ, ուստի անդրադարձել ենք Հ. Էդոյանի պոեզիայում ենթակայի ու ստորոգյալի թվային համաձայնությանը:

Համաձայնությունը նախադասության անդամների կապակցման եղանակ է. այն դրսևորվում է նրանով, որ իրար հետ կապված անդամներն ստանում են միևնույն քերականական կարգը, ուրեմն՝ համապատասխան քերականական ձևավորում: Եվ բնական է, որ այդ կապակցության բաղադրիչները՝ ենթական և ստորոգյալը, պետք է համապատասխանեն միմյանց: Դրա հետ միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ համաձայնությունն ունի շատ յուրահատկություններ՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով: Ենթակայի և ստորոգյալի համաձայնության վերաբերյալ կարևոր դիտողությունների ենք հանդիպում հայերենի շարահյուսությանը նվիրված մի շարք աշխատություններում:

Ներկայացնենք ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը Հ. Էդոյանի պոեզիայում¹:

Բանաստեղծություններում երբեմն հանդիպում ենք բազմակի ենթակաների հետ եզակի ստորոգյալի գործածության դեպքերի: Այսպես՝

«Հեռու է Ճապոնիան,

Ավստրալիան,

քաղաքը, գիշերը,

¹ Առանձնացրել ենք «Ընտրանի» գիրքը, որտեղ զետեղված են հեղինակի հրատարակած հետևյալ ժողովածուների նյութերը (Անդրադարձումներ (1964–1976), Պատկեր և կեսօր (1976–1980), Երկրային ժամանակ (1980–1983), Այժմ և միշտ (1983–1986), Քայլեր և ստվերներ (1987–1995), Հետգրություն (1996–2000), Երեք օր առանց ժամանակի (2002–2005), Փողոցի բաժանվող մասում (2005–2006), Կանգ առ, ես այստեղ եմ (2011–2012), Հենման կետ (2015):

հեռու է վաղը,
ուր հոսում են Ավստրալիան,
Ճապոնիան,
գիշերը, քաղաքը,
հեռու են աչքերը առաջին մարդու» (էջ 24):
«Չկա սկիզբ ու վերջ,
կրակ ու մոխիր, կասկած ու հույս,
ամեն ինչ այստեղ մեկ է, եզակի,
չկան սահմաններն երկնքի ու երկրի» (էջ 71):
«Դարպասներին և պատերին քաղաքի,
Ուր քո անունն ու քո բառն է պատկերված» (էջ 50):

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել բազմակի ենթակաների հետ եզակի ստորոգյալի գործածությունը: Սա գրական լեզվի կանոնների խախտում է:

Միակազմ նախադասությունները չունեն երկկազմ նախադասություններին հատուկ կառուցվածք, այսինքն՝ հատկանիշը և այն կրող առարկան տարբերակված ձևով չեն արտահայտվում ենթակայի ու ստորոգյալի միջոցով: «Միակազմ նախադասությունը,- գրում է ակադեմիկոս Ս. Աբրահամյանը,- ունենում է մեկ գերադաս կամ գլխավոր անդամ, և, եթե նախադասությունն ընդարձակ է, վերջինս ունենում է իր լրացումը կամ լրացումները»²: Հայտնի է՝ միակազմ նախադասությունները բաժանվում են երկու ենթատեսակների՝ անդամ միակազմ նախադասություններ և դիմավոր միակազմ նախադասություններ՝ պայմանավորված քերականական դեմք ունենալու և չունենալու հատկանիշով (Լուցկիներ: Լույս: Արդեն մթնում է: Ուշ է արդեն):

Անվանական անդամ միակազմ նախադասություններ հանդիպում են հատկապես գեղարվեստական խոսքում: Միակազմ նախադասությունները վարպետորեն է օգտագործում Հ. Էդոյանը իր «Ընտրանի» գրքում: Բերենք բանաստեղծությունների օրինակներ, որոնք միայն անվանական անդամ միակազմ նախադասություններով են գրված:

«Մի անուն մենակյացի:/ Հռետոր՝ անապատում:/ Մի կայծակ՝ արևի տակ:/ Մի խարույկ՝ ծաղկի վրա:/ Մի վճիռ աններդաշնակ:/ Մի անձրև-ներկայացում:/ Մի քնած հանդիսատես:/ Մի ճիչ անարձագանք:/ Մի մեխված պատուհան:/ Մի անցորդ անվերադարձ:/ Մի փողոց անգծագիր:/ Մի քայլ անն-

² Աբրահամյան 2004, 60:

Շարահյուսական կապակցության եղանակները Հ. Էդոյանի պոեզիայում

պատակ:/ Մի անկում բառերի մեջ:/ Արթնացում բառերից դուրս» (Կենսագրական տվյալներ, էջ 659):

Կամ՝ «Գիշերվա մեջ ձգվող ծառուղիներ:/ Հանգած գլանակներ լապտերների տակ:/ Բարձրի վրա ննջող տառապանքներ:/ Լուցկիներ:/ Լույս»: (էջ 15)

Բերենք նաև բայական ձևական դիմավոր միակազմ նախադասությունների օրինակներ՝

«Դանդաղում: Եվ անշարժանում»: (էջ 378)

«Արդեն մթնում է»: (էջ 588)

Անվանական ձևական դիմավոր միակազմ նախադասություն է՝

«Դրսում անձրև է»: (էջ 739)

բ) **խնդրառություն**: «խնդրառությունը բառերի ստորադասական կապակցության եղանակ է, որի ժամանակ ստորադաս անդամն ընդունում է գերադաս անդամի պահանջած համապատասխան ձևը (հոլովը)՝ պայմանավորված լրացյալի իմաստով, իսկ եթե այն բայ է, նաև սեռով»³: Խնդրառությունը բառերի ստորադասական կապակցության եղանակ է համարում նաև անվանի հայագետ Մ. Աբեղյանը: Նա խնդրառությունը անվանում է կախման հարաբերություն: «... Լրացումի կապակցության եղանակն ու հարաբերությունն իր լրացյալի հետ՝ կախված է լրացյալից»⁴: «Կախման հարաբերությունը՝ խնդրառությունը կամ վարումը,- գրում է Մ. Աբեղյանը,- արտահայտվում է՝

1. Անմիջապես հոլովներով միայն,- **անմիջական կապակցություն**:

2. Հոլովների հետ նաև կապերով, որոնց միջոցով խնդիրը կապակցվում է իր խնդրառուի հետ,- **միջական կապակցություն**»⁵:

Ըստ Գ. Զահուկյանի՝ **խնդրառություն** և **հոլովառություն** եզրույթների փոխարեն պետք է գործածել **կառավարություն** եզրը, քանի որ հասկացությունը նեղացվում է: Գ. Զահուկյանը գրում է. «Հայտնի է, որ՝ ա) կառավարությունը կարող է լինել ոչ միայն «խնդրառություն», այլև «պարագաառություն» (հմմտ. «Պատկանում է քաղաքին» և «Բնակվում է քաղաքում»). բ) կառավարությունը կարող է արտահայտվել ոչ միայն իբրև «հոլովառություն», այլև որպես «կապառություն»: Կառավարությունը քերականական կախման այն եղանակն է, որ իրականացվում է առաջին հերթին լրացումների հոլովական և

³ Տե՛ս Աբրահամյան 1976, հ. 3, 406:

⁴ Աբեղյան 1974, հ. 2, 324:

⁵ Աբեղյան 1974, հ. 2, 324:

Բարսեղյան Ա.

կապային ձևավորմամբ»⁶: Ընդունելով Գ. Զահուկյանի կարծիքը՝ այնուամենայնիվ գործածում ենք «խնդրառություն» եզրը, որը լայն գործածություն ունի հայ քերականագիտության մեջ:

Խնդրառություն շարահյուսական կապակցության եղանակի դրսևորումները Հ. Էդոյանի «Ընտրանի» գրքում համապատասխանում են գրական հայերենի օրինաչափություններին: Այսպես՝

«Դու որքան մոտեցար **նրան**, նա այնքան/ հեռացավ **քեզանից**»: (էջ 630)

«Այդ կինը ժպտում էր, և նրա ժպիտը **մահը քեզ** էր մեկնում/գեղեցիկ **ծաղկեփնջով**»: (էջ 410)

«Ես **ճակատս հողին** եմ խոնարհում,/ գոյության քաղցը ստիպում է **ինձ** բարձրանալ/ կամ իջնել միևնույն **աստիճանով**»: (էջ 597)

«**Տարածության մեջ** օրն էր բողբոջում»: (էջ 618)

Ոչ կանոնական հոլովածներ՝ պայմանավորված խնդրառական առանձնահատկություններով.

«որոնք սարսափահար փախչում են ուղիներով, թաքնվում երկնքի վարագույրի ետև (փխ.՝ ետևում) (էջ 672)»:

Իմ վրա, մեր վրա կապակցությունները հատուկ են խոսակցական լեզվին, քանի որ առաջին դեմքի (նաև երկրորդ դեմքի) անձնական դերանունով արտահայտված կապի խնդիրը դրվում է տրական հոլովով, իսկ մյուս դերանուններով կապի խնդիրը՝ սեռականով:

Օրինակ՝ «Երկնքի կորցրած աստղերն **իմ վրա** (փխ.՝ ինձ վրա)

վառվում են իմ ձեռքերին և իմ տանիքին»(էջ 70)

«...մի՞թե **իմ վրա** (փխ.՝ ինձ վրա) չի շողում հավիտյան անշարժ մի աստղ», (էջ 259)

«Ճակատագրի ինչ ցանց է փռված մեր շուրջն ու **մեր վրա** (փխ.՝ մեզ վրա)», (էջ 427)

Թեև ունի ճիշտ գործածությունը.

«Պահը կիջնի, կանշարժանա **ինձ վրա**», (էջ 51)

Ժամանակակից գրական հայերենում **ինձանից, մեզանից և ինձնից, մեզնից** ձևերից ավելի օրինաչափական և նախընտրելի են կարճ ձևերը (ինձնից, մեզնից և այլն)⁷:

Օր.՝ «Ամեն ինչ փոխվում է, **ինձանից** (փխ.՝ ինձնից) բացի»:

⁶ Զահուկյան 1974, 424:

⁷ Աբրահամյան 1981, 179:

Շարահյուսական կապակցության եղանակները Հ. Էդոյանի պոեզիայում

Ես նույնն եմ մնում (էջ 593):

Թեև ունի նախընտրելի ձևը. «Նրա հայացքը իմ մեջ է և **ինձնից** դուրս» (էջ 181):

Հ. Էդոյանի պոեզիայում շարահյուսական կապակցության եղանակների (տվյալ դեպքում ենթակայի և ստորոգյալի համաձայնության և խնդրառության հարցում) դրսևորումները համապատասխանում են գրական հայերենի օրինաչափություններին: Թեև նույնը չենք կարող ասել առդրության դեպքում, որը պայմանավորված է բանաստեղծական խոսքի առանձնահատկությամբ:

գ) **Առդրություն:** «Առդրությունը նախադասության անդամների կամ բառակապակցության բաղադրիչ բառերի ստորադասական շարահյուսական կապի ձևերից մեկն է, երբ մի բառի կախվածությունը մյուսից չի արտահայտվում բառաձևով, այլ տեղով, իմաստով, դրսևորած քերականական հարաբերության ոչ ինքնուրույն բնույթով»⁸:

Լեզվաբաններից ոմանք կախումը շարահյուսական կապակցության առանձին եղանակ են համարում առդրությունից: Օրինակ՝ Ա. Սարգսյանը թվարկում է այն «ուրույն հատկանիշները», որոնցով տարբերվում է կապակցման մյուս եղանակներից: Դրանք են ա) կախման դեպքում թվի քերականական կարգը թելադրվում է կապակցվող եզրերից մեկի կողմից, այլ ոչ թե երկուսն էլ դրվում են նույն թվով, ինչպես համաձայնության դեպքում, բ) ի տարբերություն կառավարման՝ կապակցվող եզրերից մեկը մյուսից պահանջում է ոչ թե հոլովական կամ հոլովակապային ձևավորում, այլ թվային, գ) լրացումն է թելադրում լրացյալի քերականական ձևավորումը և ոչ թե հակառակը, դ) ի տարբերություն առդրական կապակցության, որի դեպքում կապը իրականանում է շարահայտության (նաև հնչերանգի) միջոցով, այս դեպքում առկա է թվի կարգով կապակցման պահանջ»⁹: Կախումը առդրության մի տեսակ է համարում Ռ. Իշխանյանը: Նա գրում է. «Առդրության մի տեսակը կոչվում է կախում. դա այն է, երբ չհոլովված լրացումը թելադրում կամ պարտադրում է իր լրացյալի (գերադասի) թիվը: Սա հիմնականում վերաբերում է որոշիչ-որոշյալ կապակցության այն դեպքերին, երբ որոշիչը իր բառային իմաստի թելադրանքով պահանջում է որոշյալի եզակի կամ հոգնակի թիվ: Այսպես՝ փունջ-փունջ, խումբ-խումբ, մեծաքանակ, բազմաթիվ և այլ որոշիչների հետ գործածվում է հոգնակի լրացյալ, որևէ, յուրաքանչյուր, մեկ, մի և այլ որոշիչներ

⁸ Պետրոսյան, Գալստյան 1975, 25:

⁹ Սարգսյան 2015, հմ. 1–2, 39–41:

րի հետ՝ եզակի ստորոգյալ»¹⁰: Թեև Մ. Աբեղյանը «կախում» եզրույթը գործածում է այլ իմաստով. «Կախման հարաբերությունը քերականության մեջ կոչվում է խնդրառություն կամ վարում»¹¹:

Հայ քերականագիտության մեջ օգտագործվում է նաև «շարադասություն» եզրույթը, որը ևս չի ընդունում Գ. Զահուկյանը: Նրա կարծիքով, շարահյուսական կապակցության եղանակը շփոթվում է նրա իրականացման միջոցի հետ¹²: «Առդրությունը քերականական կախման իրականացման այն եղանակն է, որ հանդես է գալիս շարադասության միջոցով, այսինքն՝ ընդհանուր կաղապարի մեջ լրացումները գրավում են որոշակի դիրք լրացյալի և իրար նկատմամբ»: Ըստ Գ. Զահուկյանի՝ գոյականական բառակապակցության կաղապարն է. «դերանուն+թվական+ածական+գոյական (այն երկու նոր տները)»¹³:

Հ. Էդոյանի «Ընտրանի» գրքում հանդիպում ենք նաև առդրության սովորական դրսևորումների. այն է՝ որոշիչը և հատկացուցիչը նախորդում են իրենց լրացյալներին: Ինչպես՝ «Իսկ **խուլ քամին** մտել այգի, աղմկում է ծառերի մեջ/ և թափ տալիս **մութ ճյուղերից/ ...**» (էջ 136): ...Բացեք **այս սարկոֆագը**, ուր չարչարվում է **մի Հին եգիպտոս** (էջ 414): «Բայց սա երազ է, **ամռան խաղաղ երազ**», (էջ 239): Սակայն բանաստեղծություններում ոճական նկատառումներով գրեթե հավասարաչափ գործածվում են առդրության ոչ սովորական դրսևորումներ (որոշիչի և հատկացուցչի հետադաս գործածություն, կամ դրանց միջև ընկնում են ուրիշ բառեր): Այսպես՝ «Երբ մոտենա վերադարձի **ժամը հին/** ես կքսվեմ, ինչպես **ստվերն ստվերի**» (էջ 58): «Նա լուռ քաշվում է **խորքը թևերի/** ծուլվում **հմայքին մեղեդիների**», «Երկնքից կախվեց **գորշ դեմքը լուսնի**, (փխ.՝ լուսնի գորշ դեմքը)» (էջ 136): «Գիշերը հավաքում է **փշրված տարրերը սիրո** (փխ.՝ սիրո փշրված տարրերը)» (էջ 412): «զգացմունքի ձայնով, որ ինձ լույս կբերի/, բայց նրա մեջ **թույնն** է շողում **Լյուցիֆերի**» (էջ 282): «Երբ միացնում եմ հեռուստացույցը, **մի դեմք** է հայտնվում **իմքնագոհ ու բիրտ**» (էջ 650):

Սակայն սովորական չէ հատկացուցչին լրացնող որոշիչ շարադասությունը. այն պետք է դրվի հատկացուցչից առաջ: Օրինակ՝

«Մենք պառկած ենք, մեր շուրջը՝ քրիզանթեմներ,

¹⁰ Իշխանյան 1986, 33:

¹¹ Աբեղյան 1974, հ. 2, 397:

¹² Զահուկյան 1974, 24:

¹³ Զահուկյան 1974, 294:

Շարահյուսական կապակցության եղանակները Հ. Էդոյանի պոեզիայում

և կատաղի քամին մեր առջև ահա
թեքում է **ցողունները կապույտ ծաղիկների»** (փխ.՝ կապույտ ծաղիկների ցողունները) (էջ 239):

«Ուր բողբոջում էր/ և իսկույն կոտրվում **դեղին ծաղիկը առաջին սիրո»** (փխ.՝ առաջին սիրո դեղին ծաղիկը) (էջ 268): «Դեռ թափառում է/ **կտրված գլուխը/ Տասնվեցերորդ Լյուդովիկոսի»**(փխ.՝ Լյուդովիկոս Տասնվեցերորդի կտրված գլուխը) (էջ 268):

«Մի թվականով (երբեմն էլ անորոշ դերանունով) արտահայտված որոշիչը որպես կանոն դրվում է ածական որոշիչից առաջ»¹⁴:

«Եվ **դաժան մի արև** (փխ.՝ մի դաժան արև) իշխում էր շիկացած ավազաբլուրներին» (էջ 629):

«Մենք շրջում էինք միասին, իրար հետ, **ամռան տաք մի օր** (փխ.՝ ամռան մի տաք օր)» (էջ 147):

«**Անզգույշ մի քայլ** (փխ.՝ մի անզգույշ քայլ) - և նա կբարձրանա ուղիղ դեպի երկինք» (էջ 391):

Եզրակացություններ

«Ընտրանիի» հեղինակը պոեզիան համարում է «լեզվի բարձրագույն մակարդակ, հոգևոր և նյութական աշխարհները միացնող օղակ, որը գործում է անհատական մակարդակի վրա (ես-ի ոլորտում)՝ դեմք և անհատական գծեր հաղորդելով լեզվի անսահմանափակ էությանը»:

Հոգվածում քննվել են շարահյուսական կապակցության (տվյալ դեպքում ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում, խնդրառություն, առդրություն) եղանակների դրսևորումները Հ. Էդոյանի պոեզիայում: Փաստական հարուստ նյութի քննությունը ցույց է տվել.

ա) համաձայնություն շարահյուսական կապակցության եղանակի դրսևորումները համապատասխանում են գրական հայերենի օրինաչափություններին:

բ) Խնդրառություն շարահյուսական կապակցության եղանակի դրսևորումները նույնպես համապատասխանում են գրական հայերենի օրինաչափություններին:

գ) Առդրություն շարահյուսական կապակցության եղանակի դրսևորումները շատ դեպքերում չեն համապատասխանում գրական հայերենի օրինաչափություններին (հատկացուցիչը հատկացյալից, որոշիչը որոշյալից հետա-

¹⁴ Տե՛ս Աբրահամյան, Պառնասյան և ուրիշ. 1976, հ. 3, 406:

Բարսեղյան Ա.

դաս է գործածվում, կամ դրանց միջև ընկնում են ուրիշ բառեր): Դա պայմանավորված է բանաստեղծական խոսքի առանձնահատկությամբ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1974, Երկեր, հ. 2, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 848 էջ:

Աբրահամյան Ս.Գ. 1956, Արդի հայերենի դերանունները, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 347 էջ:

Աբրահամյան Ս.Գ. 1981, Ժամանակակից գրական հայերեն, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 407 էջ:

Աբրահամյան Ս. 2004, Հայոց լեզու. շարահյուսություն, բուհական ձեռնարկ, Երևան, «Լույս» հրատ., 587 էջ:

Աբրահամյան Ս., Պառնասյան Ն. և ուրիշ. 1976, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 857 էջ:

Առաքելյան Վ. 1958, Հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 504 էջ:

Գյուլբուդաղյան Ս. 1988, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի պետ. համալսարանի հրատ., 290 էջ:

Էդոյան Հ. 2016, Ընտրանի, Երևան, «Հայագիտակ» հրատ., 800 էջ:

Էդոյան Հ. 2020, Պոեզիայի երկակի տեսողությունը, Երևան, «Զանգակ», 368 էջ:

Իշխանյան Ռ. 1986, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Երևան, Երևանի պետ. համալսարանի հրատ., 339 էջ:

Պալասանեան Ս. 1894, Քերականութիւն մայրենի լեզուի (մաս Ա, Բ, Գ.), Թիֆլիս, 240 էջ:

Պետրոսյան Հ., Գալստյան Ս. և ուրիշ. 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 316 էջ:

Ջահուկյան Գ.Բ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 587 էջ:

Սարգսյան Ա. 2015, Ժամանակակից հայերենի շարահյուսական կապակցության մի եղանակի մասին, Լեզու և լեզվաբանություն, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 110 էջ:

СИНТАКСИЧЕСКИЕ СПОСОБЫ СОЧЕТАНИЙ В ПОЭЗИИ

Г. ЭДОЯНА

БАРСЕГЯН А.

Резюме

Ключевые слова: синтаксическое сочетание, согласование, управление, примыкание, подлежащее, сказуемое, определение.

Շարահյուսական կապակցության եղանակները Հ. Էդոյանի պոեզիայում

В статье рассмотрены синтаксические сочетания (в данном конкретном случае связи между подлежащим и сказуемым, управлением и примыканием) в поэзии Г. Эдоёна. Изучение богатого фактического материала показало:

- а) согласование синтаксических способов сочетания соответствует закономерностям армянского литературного языка;
- б) управление синтаксических способов сочетания также соответствует закономерностям армянского литературного языка;
- в) примыкание синтаксических способов сочетания в большинстве случаев не соответствует закономерностям армянского литературного языка (определитель от определяемого употребляется в обратном порядке или между ними употребляются другие слова), что обусловлено особенностью поэтической речи.

MANIFESTATIONS OF TYPES OF SYNTACTIC COMBINATIONS IN THE POETRY OF H. EDOYAN

BARSEGHYAN A.

Summary

Key words: syntactic combination, agreement, governance, adjoining, subject, predicate, attribute.

The article examines the ways in which syntactic combinations (in this particular case, the relations between subject and predicate, governance and adjoining) appear in the poetry of H. Edoyan. The study of the rich factual material has shown:

- a) the agreement of the syntactic modes of combination corresponds to the regularities of the Armenian literary language;
- b) the governance of the syntactic combinations corresponds to the regularities of the Armenian literary language;
- c) the adjoining of the syntactic means of combination in the prevailing majority of cases does not correspond to the literary linguistic regularities in the Armenian language (the attribute and the word it defines are used in a reverse order, or other words are used between them). This is due to the peculiarities of his poetic speech.